| Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն | 4 |
| Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն | 5 |
| Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն | 6 |
| Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ | 7 |

**Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն**
**2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**

(Հազար դրամ)

| | Ծան. | 2022թ. | 2021թ. |
|---|---|---|---|
| ԱԿՏԻՎՆԵՐ | | | |
| **Ոչ ընթացիկ ակտիվներ** | | | |
| Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ | 4 | 1,656 | 3,494 |
| Ներդրում ասոցիացված ընկերության կանոնադրական կապիտալում | 5 | 92,534 | 35,386 |
| Տրված փոխառություններ | 6 | 257,375 | 349,867 |
| Այլ ոչ ընթացիկ ակտիվներ | | | |
| **Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ** | | **351,565** | **388,747** |
| **Ընթացիկ ակտիվներ** | | | |
| Պաշարներ | | 23,715 | 76,921 |
| Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ | 7 | 90,912 | 88,847 |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 8 | 61,460 | 32,877 |
| Այլ ակտիվներ | | | |
| **Ընդամենը ընթացիկ ակտիվներ** | | **176,087** | **198,645** |
| **Ընդամենը ակտիվներ** | | **527,652** | **587,392** |
| ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | | |
| **Ոչ ընթացիկ պարտավորություններ** | | | |
| Հետաձգված եկամուտ | 9 | 1,656 | 3,494 |
| **Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ** | | **1,656** | **3,494** |
| | | | |
| **Ընթացիկ պարտավորություններ** | | | |
| Կրեդիտորական պարտքեր | | 865 | 7,151 |
| Հետաձգված եկամուտ | 9 | 526,861 | 568,940 |
| **Ընդամենը ընթացիկ պարտավորություններ** | | **527,726** | **576,091** |
| **Ընդամենը պարտավորություններ** | | **529,382** | **579,585** |
| ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ | | | |
| **Զուտ ակտիվներ** | | | |
| Սեփական միջոցներ | | | |
| Կուտակված արդյունք | | (1,730) | 7,807 |
| **Ընդամենը զուտ ակտիվներ** | | **(1,730)** | **7,807** |

Վաչե Փախչանյան
Հոգաբարձուների խորհրդի
Նախագահ

Արմեն Խաչիկյան
Գործադիր տնօրեն

Նվարդ Կարապետյան
Էվի ունիվերսալ ՍՊԸ
լիազորված անձ

23.03.2023թ.

**Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար.**

(Հազար դրամ)

| | Ծանոթ. | **2022թ.** | **2021թ.** |
|---|---|---|---|
| | | | |
| Եկամուտ ծրագրային գործունեությունից | 10 | 127,408 | 189,005 |
| Ծրագրային և գործառնական գործունեության ծախսեր | 10 | (93,355) | (162,442) |
| **Արդյունք ծրագրային և գործառնական գործունեությունից** | | **34,053** | **26,563** |
| Այլ եկամուտ | 10 | 78,271 | 8,933 |
| Այլ ծախսեր | 10 | (112,324) | (36,477) |
| Արտարժութային գործարքներից ստացված զուտ շահույթ (վնաս) | | (15,123) | (4,048) |
| Ասոցիացված ընկերության կանոնադրական կապիտալում ներդրման արժեքում (արժեզրկում) | 11 | 4,664 | (625) |
| **Արդյունք մինչև հարկվելը** | | **(10,459)** | (5,654) |
| Շահութահարկի գծով ծախս | | - | - |
| **Արդյունք հարկումից հետո** | | **(10,459)** | (5,654) |
| Այլ համապարփակ եկամուտ | 5 | 922 | - |
| **Ընդամենը համապարփակ արդյունք** | | **(9,537)** | (5,654) |

Դավիթ Փախչանյան
Հոգաբարձուների Խորհրդի
Նախագահ

Արմեն Խաչիկյան
Գործադիր տնօրեն

Նվարդ Կարապետյան
Էվի ունիվերսալ ՍՊԸ
լիազորված անձ

23.03.2023թ.

7-25 ծանոթագրությունները կազմում են 2022թ.տարեկան համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն
2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար.

(Հազար դրամ)

| | Սեփական միջոցներ | Կուտակված արդյունք | Ասոցիացված ընկերություն | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| | | | | |
| **Մնացորդն առ 1 հունվարի 2021թ.** | **-** | **13,461** | | **13,461** |
| **Համապարփակ եկամուտ** | | | | - |
| Տարվա արդյունք | - | (5,029) | (625) | (5,654) |
| **Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2021թ.** | **-** | **8,432** | **(625)** | **7,807** |
| **Համապարփակ եկամուտ** | | | | - |
| Տարվա արդյունք | - | (15,123) | 4,664 | (10,459) |
| Նախորդ տարվա արդյունքի վերագնահատում | | | (59) | (59) |
| Դուստր ընկերության կուտակված արդյունքի դուրսգրում | | 981 | | 981 |
| **Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2022թ.** | **-** | **(5,710)** | **3,980** | **(1,730)** |

Դավիթ Փախչանյան
Հոգաբարձուների խորհրդի Նախագահ

Արսեն Խաչիկյան
Գործադիր տնօրեն

Նվարդ Կարապետյան
Էմի ունիվերսալ ՍՊԸ լիազորված անձ

23.03.2023թ.

**Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվություն**
**2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար**

(Հազար դրամ)

| | 2022թ. | 2021թ. |
|---|---|---|
| **Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր** | | |
| Ստացված շնորհներ | 85,329 | 76,200 |
| Վճարված աշխատավարձ և դրան հավ. այլ վճար. | (15,823) | (11,078) |
| Վճարված հարկեր, տուրքեր | (8,034) | (5,068) |
| Դեբիտորական և կրեդիտորական պարտքերի փոփոխությունից | (52,597) | (180,648) |
| Տրամադրած շնորհներ | | (55,420) |
| Գործառնական այլ գործունեությունից | (8,437) | (2,678) |
| **Գործառնական գործունեությունից ստացված/(գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ** | **438** | **(178,692)** |
| **Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր** | | |
| Հիմնական միջոցների ձեռքբերում | | (3,094) |
| Բաժնետոմսերի և փայերի ձեռքբերում | (60,641) | (35,717) |
| Բաժնետոմսերի և փայերի օտարում | 10,000 | |
| Դուստր ընկերության դրամական միջոցների մնացորդի դուրսգրում | (6,780) | |
| **Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ** | **(57,421)** | **(38,811)** |
| **Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր** | | |
| Փոխառությունների տրամադրում | - | (56,950) |
| Փոխառությունների վերադարձ | 86,000 | 135,029 |
| **Ֆինանսական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ** | **86,000** | **78,079** |
| **Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր** | **29,017** | **(139,424)** |
| Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ | (434) | (1,155) |
| **Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը** | **32,877** | **173,456** |
| **Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին** | **61,460** | **32,877** |

Դավիթ Փախչանյան
Հոգաբարձուների խորհրդի Նախագահ

Արմեն Խաչիկյան
Գործադիր տնօրեն

Նվարդ Կարապետյան
Էվի ունիվերսալ ՍՊԸ
լիազորված անձ

23.03.2023թ.

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

31 դեկտեմբեր 2022թ. ավարտված տարվա համար

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները վերաբերում են «ԱՐԱՐ» քաղաքակրթական հետազոտությունների հիմնադրամին և իր ասոցիացված ընկերությանը՝ «Արար Թեքնոլոջի» փակ ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդին:

«ԱՐԱՐ» քաղաքակրթական հետազոտությունների հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ) ստեղծվել է 2014թ. Փետրվարի 17-ին հիմնադիրների N1 որոշմամբ և գործում է իր կանոնադրությանը, ՀՀ սահմանադրությանը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքին, Հիմնադրամների մասին ՀՀ օրենքին, ՀՀ միջազգային պայմանագրերին և իրավական այլ ակտերին համապատասխան:

Հիմնադրամի գտնվելու վայրի հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, 0019, քաղաք Երևան, Անտառային փողոց 158/1շ., բն. 18: Հիմնադրամը գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից 19.03.2014թ.: Գրանցման համարն է 222.160.805037:

Հիմնադրամի հիմնական նպատակներն են՝

ա/ իրականացնել պետության և հասարակության զարգացման առաջնային խնդիրների վերաբերյալ հետազոտություններ,

բ/ աշխատել շահառու խմբերի հետ՝ հետազոտությունների արդյունքները հասարակայնացնելու կամ նրանց հիման վրա համատեղ զարգացման ծրագրեր իրականացնելու համար,

գ/ կազմակերպել հետազոտությունների արդյունքների և հանրային խնդիրների վերաբերյալ հանրային քննարկումներ, լսումներ, ներկայացումներ զանգվածային լրատվության, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ չարգելված ցանկացած այլ միջոցներով,

դ/ Տրամադրել խորհրդատվություն շահառու խմբերին:

Հիմնադրամը կարող է անձամբ զբաղվել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակներով՝

- ֆոնդի կառավարման (գործադիր կառավարման) գործունեության իրականացում,
- գիտահետազոտական աշխատանք,
- խորհրդատվական աշխատանք,
- էլեկտրոնային, թվային կամ նմանատիպ այլ սարքերի, սարքավորումների վաճառքի, փոխանակության, փոխանցման կամ այլ ձևով օտարման գործարքների իրականացում:

Հիմնադրամը նաև իրականացնում է իր հիմնական նպատակներին ուղղված և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ գործունեություն:

«ԱՊԱՐԹԵՔ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) ստեղծվել է 2021թ. սեպտեմբերի 28-ին միակ մասնակցի՝ «ԱՐԱՐ» քաղաքակրթական հետազոտությունների հիմնադրամի, 19.08.2021թ. թիվ 2021/01 որոշմամբ և գործում է իր կանոնադրությանը, ՀՀ սահմանադրությանը, ՀՀ քաղաքացիական

օրենսգրքին, բաժնետիրական ընկերությունների մասին ՀՀ օրենքին, ՀՀ միջազգային պայմանագրերին և իրավական այլ ակտերին համապատասխան:

Ընկերության գտնվելու վայրի հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, 0019, քաղաք Երևան, Անտառային փողոց 158/1շ., բն. 18: Ընկերությունը գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից 28.09.2021թ.: Գրանցման համարն է 264.120.1197398:

Ընկերության հիմնական գործունեությունը ինժեներական աշխատանքների կատարումը և տեխնոլոգիական սարքավորումների արտադրությունն է, ինչպես նաև դրանց կիրառմանն առընչվող խորհրդատվական ծառայությունների մատուցումը: Ընկերությունը կարող իրականացնել ՀՀ օրենքով և այլ իրավական ակտերով չարգելված ցանկացած ձեռնարկատիրական ու տնտեսական գործունեություն: Օրենքով սահմանված գործունեության առանձին տեսակներով ընկերությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի առկայության դեպքում:

Հիմնադրամը 2022 թվականին վաճառել է Սպարթեք ՓԲ ընկերությունում իր ունեցած բաժնեմասը 10մլն ՀՀ դրամով՝ միևնույն ժամանակ փոխանցելով գնորդին ընկերության նկատմամբ իր ունեցած 70մլն ՀՀ դրամ պարտքը: Արդյունքում բաժնեմասի վաճառքից օգուտ չի ստացել:

«Արար Թեքնոլոջի» փակ ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով նախատեսված ֆոնդի կառավարման պայմանագրի հիման վրա ձևավորված, փայերի ոչ հրապարակային առաջարկի միջոցով հավաքագրված դրամական միջոցների և դրանց ներդրմամբ ձեռքբերված ակտիվների համախումբ է ինչպես դա սահմանված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, «Արար Թեքնոլոջի» փակ ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդի կանոններով, ներդրումային ֆոնդերի մասին օրենքով, և որը կառավարվում է կառավարչի կողմից: Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2021 թվականի մարտի 16-ի թիվ 29Ա որոշման Ֆոնդի կանոնները գրանցված են ՀՀ կենտրոնական բանկում:

«Արար Թեքնոլոջի» փակ ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդը չունի ներկայացուցչություններ և մասնաճյուղեր:

Համաձայն Ֆոնդի փաստաթղթերի Ֆոնդի կանոնադրական կապիտալը 31.12.2022թ. դրությամբ կազմում է 2,400,405.39 ԱՄՆ դոլարին համարժեք 944,728 հազար ՀՀ դրամ:

Ֆոնդի ֆիրմային անվանումն է «Արար Թեքնոլոջի» փակ ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդ:

Ֆոնդի կառավարիչ է հանդիսանում «ԱՐԱՐ» քաղաքակրթական հետազոտությունների հիմնադրամը:

Ֆոնդի գտնվելու վայր է համարվում կառավարչի գտնվելու վայրը, այն է՝ ՀՀ, ք.Երևան, Անտառային 158/1 բն. 18:

«Արար Թեքնոլոջի» փակ ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդը 31 դեկտեմբերի 2022թ. դրությամբ ունի տասներեք փայատեր:

«Արար Թեքնոլոջի» փակ ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդի փայատերերն են՝

| | |
|---|---|
| Ավետիք Չալաբյան | 15.62% |
| AvanPost Limited | 10.41% |
| Մովսես Ջավարյան | 6.25% |
| Արա Ջաքրայան | 3.12% |
| Միքայել Սուվարյան | 15.62% |
| Աղամ Կաբլանյան | 4.16% |
| Սարգիս Բաղալյան | 6.27% |
| Կարո Սարգսյան | 3.12% |
| Վահե Ամիրբեկյան | 3.13% |
| A4F Ltd | 15.62% |
| Արար Քաղաքակրթական Հետազոտությունների Հիմնադրամ | 9.37% |
| Վահե Կեւորկով Ռուբենի | 6.25% |
| Արամ Ռոբերտի Մանուկյան | 1.04% |

«ԱՐԱՐ» քաղաքակրթական հետազոտությունների հիմնադրամը «Արար Թեքնոլոջի» փակ ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդի ընդամենը 9.37% փայատերեր է, սակայն, հանդիսանալով «Արար Թեքնոլոջի» փակ ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդի Կառավարիչ, նշանակալի ազդեցություն ունի վերջինիս վրա: Հաշվի առնելով վերը նշվածը՝ «Արար Թեքնոլոջի» փակ ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդը հանդիսանում է «ԱՐԱՐ» քաղաքակրթական հետազոտությունների հիմնադրամի ասոցիացված ընկերություն:

Կառավարչի վարձատրության քաղաքականությունը

Կառավարչի կառավարման վճար կամ կամ նմանատիպ այլ վարձատրություն չի հաշվարկվում և չի վճարվում կառավարչին, բացառությամբ վերադարձման իրադարձության տեղի ունենալու պահից և դրանից հետո, երբ կառավարիչն իրավունք ունի ստանալ վերադարձման իրադարձության տեղի ունենալու պահից հետո ֆոնդի կատարած ներդրումների վերադարձից ստացված գումարի և կատարվող կիրառելի ֆոնդի ծախսերի տարբերության 10%-ի չափով կառավարման պարգևավճար:

## 2. ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

**Համապատասխանության մասին հայտարարություն**

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները (այսուհետ՝ ֆինանսական հաշվետվություններ) պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) պահանջների համաձայն:

**Չափման հիմունքները**

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են պատմական արժեքի սկզբունքի հիման վրա:

**Գործառնական և ներկայացման արժույթ**

Խմբի գործառնական արժույթն է հանդիսանում ՀՀ դրամը (դրամ), որը, լինելով Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը, արտացոլում է Խմբի գործունեության հիմքում ընկած իրադարձությունների և հանգամանքների տնտեսական էությունը:

Դրամը հանդիսանում է նաև սույն ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

**Գնահատումների և դատողությունների օգտագործում**

Այս ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ի պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում՝ որում վերանայվել են և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

**Փոփոխություններ հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ**

Խումբը կիրառել է հետևյալ վերանայված ՖՀՄՍ-ները, որոնք ուժի մեջ են մտել 2022 թվականի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար: Խումբը չի կիրառել որևէ ստանդարտ կամ փոփոխություն, որը նախկինում ընդունվել է, բայց ներկայումս դեռ գործող չէ:

**Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Խմբի կողմից**

- Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Խմբի կողմից:

- Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականությունում սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից: Ընթացիկ տարում չկիրառված նոր ստանդարտները, փոփոխությունները և մեկնաբանությունները չեն բացահայտվել, քանի որ չի ակնկալվում, որ դրանք էական ազդեցություն կունենան Խմբի ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև.

| | |
|---|---|
| Հղումներ հայեցակարգային հի մուտքներին (ՀՀՄՍ 3 փոփոխություններ) | - 1 հունվարի 2022թ. |
| Մուտքեր նախքան նախատեսված օգտագործումը (ՀՀՄՍ 16 փոփոխություններ) | - 1 հունվարի 2022թ. |
| Անբարենպաստ պայմանագրեր. Պայմանագրի կատարման ծախսումներ (ՀՀՄՍ 37 փոփոխություններ) | - 1 հունվարի 2022թ. |
| 2018-2020թթ. ՖՀՄՍ-ների տարեկան բարեփոխումներ (ՖՀՄՍ 1, ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 41, ՖՀՄՍ 16 փոփոխություններ) | - 1 հունվարի 2022թ. |
| Ապահովագրության պայմանագրեր(ՖՀՄՍ 17) | - 1 հունվարի 2023թ. |

**Գործունեության անընդհատությունը**

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով գործունեության անընդհատության սկզբունքի վրա, որը ենթադրում է ակտիվների իրացում և պարտավորությունների մարում սովորական գործունեության ընթացքում:

## 3. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

**Համախմբման հիմքեր**

Բոլոր այն դուստր ընկերությունները, որոնցում Հիմնադրամը ունի ձայնի իրավունքի կեսից ավելին կամ այլ կերպ կարող է վերահսկել նրանց գործառնությունները, համախմբվում են: Դուստր ընկերությունները համախմբվում են սկսած այն ամսաթվից, երբ նրանց նկատմամբ վերահսկողությունն անցել է Հիմնադրամին, և այլևս չեն համախմբվում սկսած այն ամսաթվից, երբ տեղի է ունենում վերահսկողության կորուստ: Բոլոր ներխմբային գործարքները, հաշվեկշիռները և խմբի ընկերությունների միջև չիրացված օգուտներն ամբողջապես փոխզտվում են: Չիրացված վնասները նույնպես փոխզտվում են, բացառությամբ այն դեպքի, երբ գործարքը վկայում է փոխանցվող ակտիվի արժեզրկման մասին: Անհրաժեշտության դեպքում դուստր ընկերությունների հաշվապահական հաշվառման քաղաքականությունները փոխվում են Խմբի կողմից ընդունված քաղաքականությանը համապատասխանեցնելու նպատակով:

**Եկամուտների և ծախսերի ճանաչում**

Եկամուտը ճանաչվում է այն դեպքում, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն Խումբ, և ստացված եկամուտը հնարավոր է արժանահավատորեն չափել: Ծախսը ճանաչվում է այն ժամանակ, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կարտահոսեն Խմբից, և ծախսը հնարավոր է արժանահավատորեն չափել:

**Տոկոսային ծախսեր և եկամուտներ**

Ստացվելիք տոկոսային եկամուտները, ինչպես նաև վճարվելիք տոկոսային ծախսերը Խումբը չափում, ճանաչում և գրանցում է հաշվեգրման եղանակով, անկախ եկամտի փաստացի ստացման կամ վճարումների իրականացման ժամկետից:

**Միջնորդավճարներից և այլ նմանատիպ վճարներից եկամուտներ ու ծախսեր**

Միջնորդավճարները, վարձավճարները և այլ եկամտային ու ծախսային հոդվածները հիմնականում ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով, ծառայությունների մատուցման ընթացքում:

**Փոխարժեքային տարբերությունների ճանաչում**

Արտարժութային գործարքներից եկամուտները (վնասը) ներառում է արտարժույթով ակտիվների կամ պարտավորությունների վերագնահատումից եկամուտը (վնասը):

Արտարժույթով կատարված գործարքները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ գործարքի օրվա փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են գործառնական արժույթով՝ կիրառելով ֆինանսական վիճակի մասին հաշվետվության ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքը: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժութային հոդվածների վերահաշվարկից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են որպես ծախս կամ եկամուտ:

**Հարկային հաշվառում**

Հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ բացառությամբ այն հարկերի, որոնց գծով գործառնությունների արդյունքները ճանաչվել են սեփական կապիտալում, որի դեպքում հարկերը նույնպես ճանաչվում են սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը տարվա համար հարկվող եկամուտներից վճարվելիք հարկն է՝ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին գործող հարկային դրույքներով, ինչպես նաև նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության պարտավորությունների մեթոդի համաձայն: Հետաձգված հարկերը հաշվի են առնում բոլոր ժամանակային տարբերությունները, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների միջև, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ հետաձգված շահութահարկը առաջացել է գուդվիլի կամ կազմակերպությունների միավորում չհանդիսացող գործառնություններում ակտիվների կամ պարտավորությունների նախնական ճանաչման ժամանակ և ազդեցություն չունի հաշվապահական կամ հարկման նպատակով հաշվարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի հաշվին կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվարկվում են այն հարկային դրույքով, որը ենթադրվում է, որ կգործի ակտիվների իրացման և պարտավորությունների մարման ժամանակ՝ հիմնվելով տվյալ ժամանակաշրջանի կամ հաշվետու ժամանակաշրջանի փաստացի գործող դրույքների վրա:

ՀՀ-ում գործում են նաև բազմաթիվ այլ գործառնական հարկեր, որոնք հաշվարկվում են ելնելով Խմբի գործունեությունից: Այս հարկերը ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են §այլ ծախսեր¦ հոդվածում, անուղակի հարկերի գումարներն ներառվում են այն նյութական կամ ոչ նյութական արժեքի գումարի մեջ որին վերաբերվում են այդ հարկերը:

**Հիմնական միջոցներ**

Հիմնական միջոցների միավորը, որը համապատասխանում է ակտիվի ճանաչման չափանիշներին, սկզբնապես չափվում է իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով): Հիմնական միջոցների միավորի սկզբնական արժեքն ընդգրկում է նրա գնման գինը, հարկերը, ներկրման տուրքերը, պարտադիր այլ վճարները, որոնք համապատասխան մարմնի կողմից ենթակա չեն Խմբին ետ վերադարձման:

Հիմնական միջոցները ներկայացվում են սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ՝ հաշվի առնելով արժեզրկումից կուտակված կորուստը: Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են՝

| | |
|---|---|
| Շենքեր և վարձակալած շինությունների կապիտալ բնույթի ծախսեր | 20 տարի |
| Տրանսպորտային միջոցներ | 8 տարի |
| Տնտեսական և արտադրական գույք | 8 տարի |
| Հաշվողական և համակարգչային տեխնիկա | 1 տարի |

Հիմնական միջոցների ընթացիկ վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին: Այն ծախսումները, որոնք բարձրացնում են հիմնական միջոցի միավորի շահագործման արդյունավետությունը սկզբնապես գնահատված նորմատիվային ցուցանիշների համեմատ, ճանաչվում են որպես կապիտալ բնույթի ծախսումներ և ավելացվում են ակտիվի սկզբնական արժեքին: Նշված ծախսումներն ամորտիզացվում են՝ կիրառելով գծային մեթոդը՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում, եթե դրանք չեն գերազանցում տվյալ տարվա (հիմնական միջոցի տվյալ միավորի արժեքին նշված ծախսումները ավելացնելու տարվա) հունվարի 1-ի դրությամբ հիմնական միջոցի մնացորդային արժեքը, հակառակ դեպքում ամորտիզացվում են օգտակար ծառայության ամբողջ ժամկետի ընթացքում:

Հիմնական միջոցի դուրսգրումից կամ իրացումից առաջացած արդյունքը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում է որպես եկամուտ կամ ծախս:

Հիմնական միջոցների իրական (շուկայական) արժեքի էական տատանման դեպքում դրանք վերագնահատվում են: Վերագնահատման արդյունքները արտացոլվում են ՀՀՄՍ 16-ով սահմանված կարգով:

**Ոչ նյութական ակտիվներ**

Ոչ նյութական ակտիվները ներառում են համակարգչային ծրագրերը:

Ոչ նյութական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ չափվում են ինքնարժեքով: Սկզբնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են ինքնարժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և ցանկացած կուտակված արժեզրկման ծախս: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետները կարող են լինել որոշակի և անորոշ: Որոշելի օգտակար ծառայության ժամկետ ունեցողները ամորտիզացվում են գծային մեթոդով 10 տարվա ընթացքում և գնահատվում են արժեզրկման համար, երբ առկա են արժեզրկման հատկանիշները: Որոշելի օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվների ամորտիզացիայի ժամանակահատվածներն ու մեթոդները վերանայվում են առնվազն յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջին:

**Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ**

Դրամական միջոցներն ու դրանց համարժեքները ներառում են հաշիվները բանկերում, և արժեքի փոփոխման չնչին ռիսկ են պարունակում: Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը կազմվում է ուղղակի մեթոդով:

**Ֆինանսական գործիքներ**

Խմբի ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունը հաշվեկշռում ճանաչում է այն ժամանակ, երբ այն դառնում է գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների սովորական առուվաճառքի դեպքում դրանք ճանաչվում են գործարքի օրվա դրությամբ: Սովորական ճանապարհով ձեռք բերված ֆինանսական գործիքները, որոնք հետագայում պետք է հաշվառվեն իրական արժեքով, գործարքի օրվա և պայմանագրի օրվա միջև ընկած ժամանակահատվածում հաշվառվում են նույն եղանակով, որով հաշվառվում են ձեռքբերված գործիքները:

Սկզբնական ճանաչման ժամանակ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները չափվում են իրական արժեքով՝ գումարած, ներդրումների դեպքում, գործարքին անմիջապես վերագրելի ծախսերը, բացառությամբ ֆինանսական արդյունքներում ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ներդրումները:

Սկզբնական ճանաչումից հետո, ֆինանսական արդյունքներում իրական արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններին չվերաբերող բոլոր ֆինանսական պարտավորությունները (ներառյալ վաճառքի համար պահվողները) չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական արդյունքներում իրական արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորությունները հետագայում հաշվառվում են իրական արժեքով:

Խումբը իր ֆինանսական ակտիվները դասակարգել է ըստ հետևյալ դասերի՝ վարկեր և դեբիտորական պարտքեր, ֆինանսական արդյունքներում իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքներ, վաճառքի համար մատչելի ֆինանսական գործիքներ և մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ: Ներդրումների դասակարգումը ըստ դասերի իրականացվում է ձեռքբերման պահին՝ առաջնորդվելով ղեկավարության կողմից հաստատված կանոններով: Սկզբնական ճանաչումից հետո Խումբը կարող է, հնարավորության և անհրաժեշտության դեպքում, վերադասակարգել իր ֆինանսական ակտիվները յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում:

**Ֆինանսական ակտիվների արժեզրկում**

Հաշվեկշռային ամսաթվի դրությամբ Խումբը գնահատում է ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական ակտիվների խմբի արժեզրկման աստիճանը:

**Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ապաճանաչում**

**Ֆինանսական ակտիվներ**

Ֆինանսական ակտիվը (կամ ֆինանսական ակտիվի մի մասը կամ նմանատիպ ֆինանսական ակտիվների խմբի մի մասը) ապաճանաչվում է, երբ.

- լրացել է ակտիվից դրամական հոսքեր ստանալու իրավունքը
- Խումբը փոխանցել է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը, կամ պահպանել է այդ իրավունքը, բայց պարտավորվում է ստացված գումարներն ամբողջությամբ և ժամանակին փոխանցել երրորդ կողմին՝ համաձայն փոխանցման համաձայնագրի, և
- Խումբը (ա) փոխանցել է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, կամ (բ) չի փոխանցել և չի պահպանել ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, սակայն փոխանցել է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը:

Եթե Խումբը փոխանցել է ակտիվից դրամական հոսքեր ստանալու իրավունքը և չի փոխանցել ու չի պահպանել ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, ինչպես նաև չի փոխանցել ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ապա ակտիվը ճանաչվում է մինչև Խմբի՝ ֆինանսական ակտիվում շարունակական մասնակցությունը: Փոխանցվող ակտիվի երաշխիքային ապահովման ձև ստացած շարունակական մասնակցությունը որոշվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնով՝ ակտիվի սկզբնական հաշվեկշռային արժեքը կամ փոխհատուցման վճարվելիք գումարը, որ Խումբը կարող է պահանջվել:

**Ֆինանսական պարտավորություններ**

Ֆինանսական պարտավորությունը ապաճանաչվում է այն ժամանակ, երբ այն մարվում կամ չեղյալ է համարվում, կամ լրանում է դրա ուժի մեջ մնալու ժամկետը:

Երբ գոյություն ունեցող ֆինանսական պարտավորությունը փոխարինվում է էականորեն տարբերվող պայմաններով, բայց միևնույն փոխատուին վերաբերող պարտավորությամբ, կամ էականորեն փոփոխվում են գոյություն ունեցող պարտավորության պայմանները, նման փոխանակումը կամ փոփոխությունը պետք է հանգեցնի սկզբնական պարտավորության ապաճանաչման և նոր պարտավորության ճանաչման, իսկ համապատասխան հաշվեկռային արժեքների տարբերությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

**Պաշարներ**

Պաշարները ներկայացված են ինքնարժեքի և իրացման զուտ արժեքի նվազագույնով: Ինքնարժեքը ներառում է իր մեջ ձեռքբերման և ձեռքբերման ու տեղափոխման հետ կապված ծախսերը: Իրացման զուտ արժեքը վաճառքի գինն է: Օգտագործման ժամանակ կիրառվում է առաջին մուտք առաջին ելք բանաձևը:

**Դեբիտորական պարտքեր**

Որպես դեբիտորական պարտք են դասակարգվել այն ֆինանսական ակտիվները, որոնք ստեղծվել են Խմբի կողմից ուղղակիորեն պարտապանին (դեբիտորին) ապրանքներ կամ ծառայություններ տրամադրելու միջոցով, բացառությամբ այն դեբիտորական պարտքերի, որոնք Խումբը մտադրված է անմիջապես կամ կարճ ժամկետում վաճառել, ինչպես նաև այլ ստացման ենթակա գումարները: Սույն բաժնում նկարագրված մոտեցումները կիրառվում են նաև տրված կանխավճարների հաշվառման նկատմամբ:

Դեբիտորական պարտքը դուրս է գրվում հաշվեկշռից միայն այն դեպքում, երբ Խումբը կորցնում է վերահսկողությունը պայմանագրային իրավունքների նկատմամբ, որոնք կազմում են այդ ֆինանսական ակտիվը (կամ ֆինանսական ակտիվի մի մասը):

**Փոխառություններ**

Փոխառությունները, որոնք ներառում են հաճախորդներից ներգրավված փոխառություններ, սկզբնապես ճանաչվում են ստացված զուտ մուտքերի իրական արժեքով՝ հանած անմիջապես վերագրելի գործառնական ծախսերը: Սկզբնական գնահատումից հետո փոխառություններն հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Շահույթը կամ վնասը ճանաչվում է ֆինանսական արդյունքերի մասին հաշվետվությունում այն ժամանակ, երբ ապաճանաչվում են պարտավորությունները, ինչպես նաև ամորտիզացիոն ընթացակարգի միջոցով:

**Կրեդիտորական պարտքեր և մասհանումներ**

Որպես կրեդիտորական պարտք են դասակարգվում այն մարման ենթակա գումարները, որոնք ստեղծվում են Խմբի կողմից ուղղակիորեն պարտատիրոջից (կրեդիտորից) ապրանքներ կամ ծառայություններ գնելու միջոցով, ինչպես նաև այլ վճարման ենթակա գումարները: Սույն բաժնում նկարագրված մոտեցումները կիրառվում են նաև ստացված կանխավճարների հաշվառման նկատմամբ:

**Շնորհներ**

Ակտիվներին վերաբերող շնորհները, ներառյալ իրական արժեքով հաշվառվող ոչ դրամային շնորհները, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում են շնորհը գրանցելով որպես հետաձգված եկամուտ:

**Պահուստներ**

Պահուստը ճանաչվում է այն ժամանակ, երբ Խումբը անցյալ դեպքերի արդյունքում ունի իրավական կամ կառուցողական պարտավորություն և, հավանական է, որ պարտավորության մարումը կպահանջի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք և հնարավոր կլինի պարտավորության գումարը արժանահավատորեն գնահատել:

**Հաշվանցում**

Ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, եկամուտներն ու ծախսերը հաշվանցվում են և զուտ գումարը արտացոլվում է հաշվեկշռում, եթե գոյություն ունի ճանաչված գումարների հաշվանցման օրենքորեն հաստատված իրավունք, և առկա է զուտ գումարների հիման վրա հաշվանցման կամ ակտիվի իրացման ու միաժամանակ պարտավորության մարման մտադրություն:

## 4. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ

(Հազար դրամ)

| | Մեքենաներ և սարքավորումներ | Արտադրական և տնտեսական գույք, գործիքներ | Այլ հիմնական միջոցներ | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| Սկզբնական արժեք | | | | |
| **Առ 1 հունվարի 2021թ.** | **1,227** | **874** | **79** | **2,180** |
| Ավելացում | 1,922 | 1,520 | 250 | 3,692 |
| Դուրս գրում | - | - | - | - |
| **Մնացորդը առ 31.12.2021թ.** | **3,149** | **2,394** | **329** | **5,872** |
| Ավելացում | | | | - |
| Դուրս գրում | | | | - |
| **Մնացորդը առ 31.12.2022թ.** | **3,149** | **2,394** | **329** | **5,872** |
| | | | | |
| Մաշվածք | | | | |
| **Առ 1 հունվարի 2021թ.** | **1,126** | **610** | **36** | **1,772** |
| Տարվա ծախս | 372 | 222 | 12 | 606 |
| Դուրս գրում | | | | - |
| **Մնացորդը առ 31.12.2021թ.** | **1,498** | **832** | **48** | **2,378** |
| Տարվա ծախս | 1,525 | 272 | 41 | 1,838 |
| Դուրս գրում | | | | - |
| **Մնացորդը առ 31.12.2022թ.** | **3,023** | **1,104** | **89** | **4,216** |
| | | | | |
| **Զուտ հաշվեկշռային արժեք** | | | | |
| **Մնացորդը առ 31.12.2021թ.** | **1,651** | **1,562** | **281** | **3,494** |
| **Մնացորդը առ 31.12.2022թ.** | **126** | **1,290** | **240** | **1,656** |

## 5. ՆԵՐԴՐՈՒՄ ԱՍՈՑԻԱՑՎԱԾ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

(Հազար դրամ)

| | 2022թ. | 2021թ. |
|---|---|---|
| Մնացորդը տարվա սկզբում | 35,386 | - |
| Ասոցիացված ընկերության նախորդ ժամանակաշրջանի կուտակված վնասի վերագնահատում փայաբաժնի աճին համապատասխան | (59) | |
| Ներդրում այլ ընկերության կանոնադրական կապիտալում | 52,543 | 36,011 |
| Զուտ ակտիվների ավելացում (նվազում) (Տես Ծանոթագրություն 11) | 4,664 | (625) |
| Մնացորդը տարվա ավարտին | 92,534 | 35,386 |

| | | |
|---|---|---|
| Դուստր ընկերության դուրսգրում | 981 | |
| Ասոցիացված ընկերության նախորդ ժամանակաշրջանի կուտակված վնասի վերագնահատում փայաբաժնի աճին համապատասխան | (59) | |
| Ընդամենը այլ համապարփակ-եկամուտ | 922 | - |

Հիմնադրամը 2021 թվականին Արար Թեքնոլոջի փակ ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդին է վճարել 36,011 հազար ՀՀ դրամ գումար փայերի ձեռքբերման նպատակով: Միևնույն ժամանակ Հիմնադրամը հանդիսանում է Արար Թեքնոլոջի փակ ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդի կառավարիչ և ունի նշանակալի ազդեցություն հետևաբար Արար Թեքնոլոջի փակ ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդը հանդիսանում է ասոցիացված:

Հիմնադրամը 2022 թվականին վաճառել է Սպարքեք ՓԲ ընկերությունում իր ունեցած բաժնեմասը 10մլն ՀՀ դրամով՝ միևնույն ժամանակ փոխանցելով գնորդին ընկերության նկատմամբ իր ունեցած 70մլն ՀՀ դրամ պարտքը: Արդյունքում բաժնեմասի վաճառքից օգուտ չի ստացել:

Հիմնադրամը 2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ունի Արար Թեքնոլոջի փակ ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդի փայերում 88,553 հազար ՀՀ դրամ գումարի ներդրում և հանդիսանում է 9.37% փայատեր: Միևնույն ժամանակ Հիմնադրամը հանդիսանում է Արար Թեքնոլոջի փակ ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդի կառավարիչ և ունի նշանակալի ազդեցություն, հետևաբար Արար Թեքնոլոջի փակ ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդը հանդիսանում է ասոցիացված:

## 6. ՏՐՎԱԾ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆ

(Հազար դրամ)

| | 2022թ. | 2021թ. |
|---|---|---|
| **Ոչ ընթացիկ** | | |
| Տրված փոխառություն | 257,375 | 349,867 |
| | **257,375** | **349,867** |
| **Ընթացիկ** | - | - |
| Տրված փոխառություն | - | - |

Տրված փոխառություններն իրենցից ներկայացնում են տրամադրված անտոկոս փոխառություններ:

## 7. ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ ԵՎ ԿԱՆԽԱՎՃԱՐՆԵՐ

(Հազար դրամ)

| | 2022թ. | 2021թ. |
|---|---|---|
| | | |
| Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով | 56,571 | - |
| Դեբիտորական պարտքեր ծախսերի փոխհատուցումների գծով | 5,461 | - |
| Տրված կանխավճարներ | 28,880 | 88,847 |
| | **90,912** | **88,847** |

## 8. ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐ

(Հազար դրամ)

| | 2022թ. | 2021թ. |
|---|---|---|
| | | |
| Բանկային հաշիվներ տեղական բանկերում | 61,460 | 32,721 |
| Դրամական միջոցների համարժեքներ | - | 156 |
| | 61,460 | 32,877 |

Դրամական միջոցների համարժեքներն իրենցից ներկայացնում են օգտագործման նպատակով ձեռքբերված վառելիքի կտրոնները:

## 9. ՀԵՏԱՁԳՎԱԾ ԵԿԱՄՈՒՏ

(Հազար դրամ)

| | 2022թ. | 2021թ. |
|---|---|---|
| | | |
| Ակտիվներին վերաբերվող շնորհ | | |
| **Մնացորդ առ 1 հունվարի** | 3,494 | 408 |
| Ավելացում | - | 3,692 |
| Պակասեցում | (1,838) | (606) |
| **Մնացորդ առ 31 դեկտեմբերի** | 1,656 | 3,494 |
| | | |
| Եկամուտներին վերաբերվող շնորհ | | |
| **Մնացորդ առ 1 հունվարի** | 568,940 | 685,434 |
| Ավելացում | 85,329 | 179,976 |
| Պակասեցում | (127,408) | (296,470) |
| **Մնացորդ առ 31 դեկտեմբերի** | 526,861 | 568,940 |

## 10. ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ, ԾԱԽՍԵՐԸ ԸՍՏ ԲՆՈՒՅԹԻ

(Հազար դրամ)

| | 2022թ. | 2021թ. |
|---|---|---|
| | | |
| **Եկամուտներ** | | |
| Եկամուտներ ապրանքների վաճառքից | 56,571 | |
| Եկամուտներին վերաբերող շնորհներից | 127,408 | 189,005 |
| Կառավարչական գործունեությունից | 19,862 | 8,327 |
| Եկամուտներին վերաբերող շնորհներից (Տես ծանոթագրություն 9) | 1,838 | 606 |
| Արտարժույթի փոխարժեքային տարբերությունից զուտ օգուտ | 940 | 1,892 |
| | **206,619** | **199,830** |
| **Ծախսեր** | | |
| Նվիրատվությունների գծով | (93,355) | (162,442) |
| Կառավարչական գործունեության ծախսեր | (19,862) | (8,327) |
| Վաճառված ապրանքների ինքնարժեք | (56,571) | - |
| Աշխատավարձի գծով ծախսեր | (11,252) | (11,317) |
| Գործուղման և ներկայացուցչական ծախսեր | (1,838) | (244) |
| Անհատույց ստացված ակտիվների գծով | (1,838) | (606) |
| Հեռահաղորդակցություն և կապ | (226) | (723) |
| Գրասենյակային և կոմունալ ծախսեր | (83) | (406) |
| Վառելիք | (3,356) | (1,688) |
| Վարձակալություն | (3,360) | (5,282) |
| Աուդիտ և խորհրդատվություն | (5,577) | (1,931) |
| Բանկային ծառայություն | (142) | (322) |
| Չփոխհատուցվող հարկեր | - | (120) |
| Արտարժույթի փոխարժեքային տարբերությունից զուտ վնաս | (16,063) | (5,940) |
| Այլ ծախսեր | (8,219) | (5,512) |
| | **(221,742)** | **(204,860)** |

## 11. ԱՍՈՑԻԱՑՎԱԾ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՐԺԵԶՐԿՈՒՄ

Արար Թեքնոլոջի փակ ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդի զուտ ակտիվները տարվա արդյունքներով աճել են 49,754 հազար ՀՀ դրամով, որի 9,37 տոկոսը՝ 4,664 հազար ՀՀ դրամ, հանդիսանում է Հիմնադրամի փային համապատասխան՝ իր ասոցիացված ընկերության՝ Արար Թեքնոլոջի փակ ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդի, կանոնադրական կապիտալում ներդրման արժեքում: Քանի որ հիմնադրամի փայը ավելացել է ասոցիացված ընկերության մեջ, ուստի ավելացման չափին համապատասխան վերագնահատվել է նախորդ ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքում հիմնադրամի փայը, ինչը կազմում է 59 հազար դրամ

(Հազար դրամ)

| | 2022թ. | 2021թ. |
|---|---|---|
| Ասոցիացված ընկերության զուտ ակտիվների աճ (նվազում) | 49,754 | (7,293) |
| Փայը ասոցիացված ընկերությունում | 9.37% | 8.57% |
| Ներդրման արժեորում (արժեզրկում) | 4,664 | (625) |
| Ասոցիացված ընկերության նախորդ ժամանակաշրջանի կուտակված վնասի վերագնահատում՝ փայաբաժնի աճին համապատասխան | (59.00) | |

## 12. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ

Խումբը կարևորում է ռիսկերի կառավարման գործընթացը, որի նպատակն է ֆինանսական կորուստների կրճատումը և իրականացվող գործառնությունների հուսալիության ապահովումը:

Խմբի գործունեությունը առնչվում է հետևյալ ֆինանսական ռիսկերի հետ:

- ✓ վարկային (պարտքային) ռիսկ,
- ✓ շուկայական ռիսկ.
- ✓ գնային ռիսկ,
- ✓ տոկոսային ռիսկ,

### 12.1 Պարտքային ռիսկ

Վարկային (պարտքային) ռիսկը գործընկերոջ կողմից իր ստանձնած պարտավորությունները (այդ թվում թողարկած արժեթղթերի գծով) ժամանակին և լրիվությամբ չկատարելու ռիսկն է, որը գնահատվում է պարտքի և տոկոսային վճարումների ընդհանուր գումարով,

Վարկային ռիսկի հաշվարկում ընդգրկվում են Խմբի ակտիվները, հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունները և հետհաշվեկշռային անավարտ ժամկետային գործառնությունները:

### 12.2 Շուկայական ռիսկ

**Շուկայական ռիսկի վերլուծություն**

Շուկայական ռիսկը Խմբի կողմից շուկայական գների փոփոխության հետևանքով կորուստներ կրելու վտանգն է, որը կապված է տոկոսադրույքների նկատմամբ զգայուն ակտիվների ու պասիվների և կապիտալի գործիքների հետ:

Շուկայական ռիսկը իր մեջ ներառում է արտարժութային, տոկոսադրույքների փոփոխման և գնային ռիսկերը:

Արտարժութային ռիսկի կառավարումն իրականացվում է արտարժույթների փոխարժեքների փոփոխություններով պայմանավորված օգուտներ ստանալու (կորուստներ չկրելու) տեսանկյունից:

Արտարժութային ռիսկի կառավարման գործընթացը ներառում է՝ արտարժութային շուկայի ուսումնասիրման, արտարժութային ռիսկի կանխատեսման, գնահատման՝ ռիսկի հնարավոր չափերի և հետևանքների որոշման, արտարժութային ռիսկի հետ կապված կորուստների կանխարգելման և նվազեցման փուլերը: Արժութային շուկայի վերլուծության գնահատականները Խմբում արվում ենհիմք ընդունելով տարբեր տեղեկատվական համակարգերով ստացված տեղեկատվությունը, միջազգային ինտերնետային կայքերի վերլուծական տեղեկատվությունները՝ կիրառելով վերլուծության երկու մեթոդ՝ ֆունդամենտալ և տեխնիկական:

Ֆունդամենտալ վերլուծությունը ենթադրում է շուկայի վերլուծություն՝ տնտեսությունը բնութագրող տարբեր ցուցանիշների դինամիկայի, ինչպես նաև քաղաքական իրադարձությունների, օրենսդրական դաշտի փոփոխությունների հիման վրա: Կանխատեսումների իրականացման համար հիմք են հանդիսանում երկարաժամկետ հատվածում փոխարժեքի վրա ազդող երկրի տնտեսական պայմանները: Տեխնիկական վերլուծությունը ենթադրում է գների նախկին դինամիկայի հիման վրա գների ապագա փոփոխությունների կանխատեսումը: Ուսումնասիրվում են փոխարժեքների տատանման միտումները կամ տրենդները, վերլուծության են ենթարկվում փոխարժեքների տատանումների դրսևորումները:

## 12.3 Արտարժույթի ռիսկ

Արտարժութային ռիսկը արժութային փոխարժեքի անբարենպաստ փոփոխության ռիսկն է, որն իր մեջ ներառում է փոխարժեքների, դրանց տատանողականության փոփոխության, տարբեր փոխարժեքների միջև հարաբերակցության փոփոխության ռիսկերը:

Ակտիվները կամ պարտավորությունները պարունակում են արտարժութային ռիսկ, երբ դրանց մեծությունները, դրանց գծով ստացվելիք կամ վճարվելիք գումարները դրամային արտահայտությամբ ժամանակի ընթացքում կարող են փոփոխվել արտարժույթի՝ Հայաստանի Հանրապետության դրամի նկատմամբ փոխարժեքի փոփոխությամբ պայմանավորված:

Արտարժութային ռիսկի կառավարումն իրականացվում է արտարժույթների փոխարժեքների փոփոխություններով պայմանավորված օգուտներ ստանալու (կորուստներ չկրելու) տեսանկյունից:

Արտարժութային ռիսկի կառավարման գործընթացը ներառում է՝ արտարժութային շուկայի ուսումնասիրման, արտարժութային ռիսկի կանխատեսման, գնահատման՝ ռիսկի հնարավոր չափերի և հետևանքների որոշման, արտարժութային ռիսկի հետ կապված կորուստների կանխարգելման և նվազեցման փուլերը: Արժութային շուկայի վերլուծության գնահատականները Խմբում արվում են հիմք ընդունելով տարբեր տեղեկատվական համակարգերով ստացված տեղեկատվությունը, միջազգային ինտերնետային կայքերի վերլուծական տեղեկատվությունները՝ կիրառելով վերլուծության երկու մեթոդ՝ ֆունդամենտալ և տեխնիկական: Ֆունդամենտալ վերլուծությունը ենթադրում է շուկայի վերլուծություն՝ տնտեսությունը բնութագրող տարբեր ցուցանիշների դինամիկայի, ինչպես նաև քաղաքական իրադարձությունների, օրենսդրական դաշտի փոփոխությունների հիման վրա: Կանխատեսումների իրականացման համար հիմք են հանդիսանում երկարաժամկետ հատվածում փոխարժեքի վրա ազդող երկրի տնտեսական պայմանները: Տեխնիկական վերլուծությունը ենթադրում է գների նախկին դինամիկայի հիման վրա գների ապագա փոփոխությունների կանխատեսումը: Ուսումնասիրվում են փոխարժեքների տատանման միտումները կամ տրենդները, վերլուծության են ենթարկվում փոխարժեքների տատանումների դրսևորումները:

Խումբը 31.12.2022թ. դրությամբ չունի զգալի արտարժութային մնացորդներ:

## 12.4. Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի փոփոխությունն ուղղակիորեն ազդում է ներդրումային Խմբի տոկոսային ռիսկի, ակտիվների ու պարտավորությունների հետ կապված դրամական միջոցների հոսքի և նրանց իրական արժեքի վրա: Այդ պատճառով, ակտիվների և պարտավորությունների տոկոսադրույքների վերանայման ժամկետայնության վերլուծությունը թույլ է տալիս ֆինանսական հաշվետվություններն օգտագործողներին վերլուծել ներդրումային Խմբի տոկոսադրույքի ռիսկը և, հետևաբար, ակնկալվող օգուտները կամ վնասները:

Տոկոսային ռիսկը փոխառու կապիտալի շուկայում անբարենպաստ փոփոխությունների ռիսկն է, որը իր մեջ ներառում է տոկոսադրույքների փոփոխության, եկամտաբերության կորի տեսքի փոփոխության, տոկոսադրույքների տատանողականության փոփոխության, տարբեր տոկոսադրույքների միջև հարաբերակցության փոփոխության ռիսկերը:

Տոկոսադրույքի ռիսկը հաշվարկվում է որպես տոկոսադրույքի հատուկ ռիսկի և ընդհանուր ռիսկի հանրագումար, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

ՏՌ = ՏՀՌ+ՏԸՌ,

որտեղ՝

ՏՌ - տոկոսադրույքի ռիսկն է,

ՏՀՌ - տոկոսադրույքի հատուկ ռիսկն է,

ՏԸՌ - տոկոսադրույքի ընդհանուր ռիսկն է:

Տոկոսադրույքի հատուկ և ընդհանուր ռիսկերը հաշվարկվում են առևտրական նպատակներով պահվող և վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթերի նկատմամբ: Ընդ որում, պարտքային արժեթղթերը դիրքերի հաշվարկում ընդգրկվում են ընթացիկ շուկայական արժեքով:

Պարտքային արժեթղթերի դիրքը Խմբի պարտքային արժեթղթերի (ներառյալ հետհաշվեկշռային ածանցյալ գործիքների հիմքում ընկած պարտքային արժեթղթերի) և որպես պարտավորություն հանդիսացող պարտքային արժեթղթերի (ներառյալ՝ հետհաշվեկշռային ածանցյալ գործիքների հիմքում ընկած պարտքային արժեթղթերի) մեծությունների տարբերությունն է: Պարտքային արժեթղթերի դիրքերը սահմանվում են.

ա. երկար, եթե տարբերությունը մեծ է զրոյից,

բ. կարճ, եթե տարբերությունը փոքր է զրոյից,

գ. փակ, եթե տարբերությունը հավասար է զրոյի:

Պարտքային արժեթղթերի համախառն դիրքը հաշվարկվում է որպես պարտքային արժեթղթերի երկար և կարճ դիրքերի բացարձակ մեծությունների հանրագումար:

Տոկոսադրույքի հատուկ ռիսկի հաշվարկման նպատակով պարտքային արժեթղթերի յուրաքանչյուր խմբի նկատմամբ իրականացվում է պարտքային արժեթղթերի դիրքերի հաշվարկ:

Դիրքերի հաշվարկից հետո հաշվարկվում է պարտքային արժեթղթերի համախառն դիրքը, որն էլ տոկոսադրույքի հատուկ ռիսկի մեծությունն է:

Համախառն դիրքի հաշվարկում պարտքային արժեթղթերը տարբերակված կշիռներով ընդգրկելու նպատակով դասակարգվում են հետևյալ դասերի:

Պարտքային արժեթղթերի դասերն են.

պետական պարտքային արժեթղթեր՝ պետությունների/կառավարությունների, կենտրոնական բանկերի և տեղական կառավարման մարմինների պարտքային արժեթղթեր,

հուսալի պարտքային արժեթղթեր: Հուսալի պարտքային արժեթղթերի թվին են դասվում միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից թողարկված պարտքային արժեթղթերը, Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների և օտարերկրյա բանկերի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող մասնաճյուղերի պարտքային արժեթղթերը, օտարերկրյա բանկի կողմից թողարկված /ԲԲԲ-/Բաա3/ և ավելի բարձր վարկանիշ ունեցող պարտքային արժեթղթերը, օտարերկրյա ոչ բանկ կազմակերպության կողմից թողարկված /Ա-/Ա3/ և ավելի բարձր վարկանիշ ունեցող պարտքային արժեթղթերը, ինչպես նաև Կենտրոնական բանկի կողմից 'Բ-' և ավելի բարձր վարկանիշ ստացած ոչ բանկ կազմակերպությունների պարտքային արժեթղթերը,

այլ պարտքային արժեթղթեր, որոնք չեն դասվում պետական պարտքային և հուսալի պարտքային արժեթղթերի շարքին:

Խումբը 31.12.2022թ. դրությամբ չունի տոկոսային պարտավորություններ կամ ակտիվներ:

## 12.5 Գնային ռիսկ

Շուկայական գների փոփոխությունը մեծապես ազդում է ֆինանսական գործիքների արժեքի վրա, ընդ որում, այդ փոփոխությունները կարող են պայմանավորված լինել ինչպես առանձին արժեթղթերին կամ նրանց թողարկողներին հատուկ գործոններով, այնպես էլ շուկայում շրջանառվող բոլոր արժեթղթերի վրա ազդող ընդհանուր գործոններով:

Գնային ռիսկը շուկայում անբարենպաստ փոփոխությունների ռիսկն է, որն իր մեջ ներառում է արժեթղթերի գների փափախության, արժեթղթերի գների տատանողականության, տարբեր արժեթղթերի և ինդեքսների միջև գնային հարաբերակցության փոփոխության ռիսկերը:

Գնային ռիսկը հաշվարկվում է առևտրական նպատակներով պահվող և վաճառքի համար մատչելի կապիտալի գործիքների (բաժնային արժեթղթերի) նկատմամբ:

Կապիտալի գործիքների դիրքը, որպես ակտիվ հանդիսացող կապիտալի գործիքների (ներառյալ՝ հետհաշվեկշռային ածանցյալ գործիքների հիմքում ընկած կապիտալի գործիքների) և որպես պարտավորություն հանդիսացող կապիտալի գործիքների (ներառյալ՝ հետհաշվեկշռային ածանցյալ գործիքների հիմքում ընկած կապիտալի գործիքների) մեծությունների տարբերությունն է: Կապիտալի գործիքների դիրքերը սահմանվում են՝

ա. երկար, եթե տարբերությունը մեծ է զրոյից,

բ. կարճ, եթե տարբերությունը փոքր է զրոյից,

գ. փակ, եթե տարբերությունը հավասար է զրոյի:

Կապիտալի գործիքների համախառն դիրքը հաշվարկվում է որպես կապիտալի գործիքների տարբեր դիրքերի (երկար և կարճ) բացարձակ մեծությունների հանրագումար:

Կապիտալի գործիքների համախառն զուտ դիրքը հաշվարկում է որպես կապիտալի գործիքների երկար դիրքերի հանրագումարի և կարճ դիրքերի հանրագումարի (բացարձակ մեծությամբ) միջև տարբերություն:

Կապիտալի գործիքները դիրքերի հաշվարկում ընդգրկվում են ընթացիկ շուկայական արժեքով:

## 12.6. Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը խմբի կողմից ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարման ունակության մասնակի կամ ամբողջությամբ կորստի վտանգն է:

Իրացվելիության ռիսկերը ի հայտ են գալիս անբավարար իրացվելիության կամ շուկայականից առավել բարձր արժեքով ձեռք բերված արդյունքում, ինչը արտահայտվում է այնուհետև խմբի եկամուտներում և ծախսերում: Առաջանում է այն ժամանակ, երբ Խումբը չի կարողանում վերահսկել պասիվների կրճատումը և ապահովել ակտիվների աճ: Իրացվելիության ռիսկը այն ռիսկն է, որ Խմբի իրացվելի ակտիվները չեն բավականացնի Խմբի պարտավորությունները կատարելու համար: Իրացվելիության ռիսկի կառավարումը ընթացիկ ժամանակահատվածում կապված է ակտիվների և պասիվների կառավարման արդյունավետ խնդրի լուծման հետ՝ ստանալ առավելագույն շահույթ, պահպանելով իրացվելիության անհրաժեշտ մակարդակը:

Իրացվելիության ռիսկի կառավարումը ակնկալում է .

- ✓ կանխիկ հոսքերի վերլուծություն
- ✓ ակտիվների և պարտավորությունների դասակարգում ըստ պայմանագրային ժամկետների
- ✓ շուկայի մոնիտորինգ:

Խմբում իրացվելիության կառավարման հիմնական մեթոդ է հանդիսանում ակտիվների կառավարման մեթոդը:

Իրացվելիության առաջնային աղբյուրները Խմբի դրամարկղն է և հաշվարկային հաշիվներում առկա միջոցները: Իրացվելիության երկրորդային աղբյուրները բարձր իրացվելի եկամտաբեր ակտիվներն են, որոնք կարճ ժամկետում և նվազագույն կորուստների ռիսկով կարելի է փոփոխել կանխիկ դրամական միջոցների: Դրանք ձևավորվում են ՀՀ պետական գանձապետական արժեթղթերից:

Իրացվելիության կառավարման համար կիրառում են նաև իրացվելի ակտիվները վաճառելու մեթոդը, երբ իրացվելիության ցածր մակարդակի դեպքում Խումբը դրամական միջոցներ ստանալու նպատակով վաճառում է ակտիվներ և պարտավորությունների կառավարման մեթոդն է, որը ենթադրում է ֆինանսական շուկայում արտաքին փոխառությունների, վարկերի, ռեպո-համաձայնագրերի միջոցով փոխառու միջոցների ներգրավում ու ակտիվների և պարտավորությունների միջև անհրաժեշտ հարաբերակցության հաստատում: Իրացվելիության ռիսկը կառավարելու և վերահսկելու նպատակով Խումբը պարբերաբար կատարում է ընթացիկ և ժամկետային իրացվելիության մոնիտորինգ՝ արտաքին միջավայրի փոփոխության դեպքում իրացվելիության լավագույն իրավիճակին հասնելու համար:

## 13. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ և ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔ

Խմբի գնահատմամբ իր ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքները էականորեն չեն տարբերվում իրենց հաշվեկշռային արժեքներից:

Ֆինանսական գործիքների իրական արժեքը հիմնված է հաշվետու ամսաթվի դրությամբ նրանց շուկայական գնանշման վրա, առանց նվազեցնելու գործարքի հետ կապված ծախսումները: Եթե շուկայական գնանշումը հասանելի չէ, գործիքի իրական արժեքը չափվում է կիրառելով գնորոշման մոդելներ կամ զեղչված դրամական հոսքերի տեխնիկան:

Երբ կիրառվում է զեղչված դրամական հոսքերի տեխնիկան, գնահատված ապագա դրամական հոսքերը հիմնված են ղեկավարության լավագույն գնահատականների հիման վրա և զեղչման դրույքը նմանատիպ պայմաններով գործիքի տոկոսադրույքն է հաշվետու ամսաթվի դրությամբ: Երբ գնորոշման մոդելներն են կիրառվում, ներմուծվող փոփոխականները հիմնված են հաշվետու ամսաթվի դրությամբ շուկայական համապատասխան փոփոխականների վրա:

## 14 . ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱՊԱԳԱ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՀԵՋԱՎՈՐՈՒՄ

Խումբը հաշվետու ժամանակաշրջանում չունի այնպիսի ֆինանսական գործիք, որը հաշվառվում է որպես կանխատեսված ապագա գործարքների հետ կապված հեջ:

## 15. ԱՊԱՃԱՆԱՉՈՒՄ

Ֆինանսական ակտիվը ապաճանաչվում է, երբ վերանում է ակտիվի իրավունքի պահանջը: Խմբի հաշվեկշռում ապաճանաչված ֆինանսական ակտիվ չի հաշվառվում:

Ֆինանսական պարտավորությունը ապաճանաչվում է, երբ նա մարվում է, համարվում է չեղյալ կամ դառնում է ժամկետանց: Խմբի հաշվեկշռում ապաճանաչված ֆինանսական պարտավորություն չի հաշվառվում:

## 16. ԳՐԱՎԱԴՐՎԱԾ ԱԿՏԻՎՆԵՐ

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ չունի գրավադրված ակտիվներ:

## 17. ԸՆԴՈՒՆՎԱԾ ԳՐԱՎ

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը չունի ընդունված գրավ:

## 18. «ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԿԱՏԱՐՈՒՄ/ԽԱԽՏՈՒՄ»

Խումբը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեկշռում չունի հաշվառված այնպիսի պարտավորություններ, որոնց գծով պայմանագրային պարտավորությունները Խմբի կողմից խախտվել են: Հաշվետու ժամանակաշրջանում ներդրումային Խմբի կողմից որևէ պայմանագրային պարտավորություն չի խախտվել:

Դավիթ Փախչանյան
Հոգաբարձուների Խորհրդի
Նախագահ

Արմեն Խաչիկյան
Գործադիր տնօրեն

Նվարդ Կարապետյան
Էվի ունիվերսալ ՍՊԸ
լիազորված անձ

«ԱՐԱՐ»
00131

23.03.2023թ.



Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 09.06.2023 12:24